

© Սույն տեքստը և այն վերահրապարակելու թույլտվությունը տրամադրվել է «ՀՀ արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ Դատարանի տվյալների բազա HUDOC-ում ընդգրկելու համար: [Թարգմանությունն արդեն իսկ հրապարակվել է www.echr.am կայքում]

© The present text and the authorisation to republish it were granted by the “Translation Center of the Ministry of Justice of the Republic of Armenia” SNCO for the purpose of its inclusion in the Court’s database HUDOC. [Translation already published in www.echr.am]

© La traduction et l’autorisation de republier ont été accordées par la “Centre de Traduction du Ministère de la Justice d’Arménie” SNCO à son inclusion dans la base de données HUDOC de la Cour. [La traduction déjà publiée sur www.echr.am]

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(գանգատ թիվ 43478/11)

ՎՃԻՌ

8-րդ հոդված • Մասնավոր կյանքի նկատմամբ հարգանք • Ներպետական իրավունքի խախտմամբ՝ գաղտնի դիտման թույլտվություն տվող դատարանի որոշում՝ անորոշ ձեւակերպումներով

6-րդ հոդվածի 1-ին կետ (քրեական) • Արդարացի լսումներ • Ընդհանուր առմամբ դատավարության արդարացիություն, որի վրա չի ազդել գաղտնի կերպով տեսաձայնագրված նյութերի օգտագործումը

35-րդ հոդվածի 1-ին կետ • Համապատասխանություն վեցամսյա ժամկետի կանոնին • Ներպետական իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների բացակայություն՝ գաղտնի դիտման մասին որոշումը բողոքարկելու համար • Գործը քննող դատարան բողոք ներկայացնելու դիմումատուի փորձը՝ ոչ անողջամիտ

ԱՏՐԱՍԲՈՒՐԳ

5 դեկտեմբերի 2019թ.

Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Համբարձումյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք),
հանդես գալով Պալատի հետեւյալ կազմով՝

Քսենյա Տուրկովիչ [Ksenija Turković]՝ *Նախագահ,*

Զրշիշթոֆ Վոյտիչեկ [Krzysztof Wojtyczek],

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Պերե Պաստոր Վիլանովա [Pere Pastor Vilanova],

Պաուլին Կոսկելո [Pauliine Koskelo],

Յովան Իլևսկի [Jovan Ilievski],

Ռաֆաելե Սաբատո [Raffaele Sabato]՝ *դատավորներ,*

եւ Աբել Կամպոս [Abel Campos]՝ *Բաժանմունքի քարտուղար,*

2019 թվականի նոյեմբերի 12-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի տկն Կարինե Համբարձումյանի (դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2011 թվականի հունիսի 27-ին Դատարան ներկայացված գանգատի (թիվ 43478/11) հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել է Երեւանում գործող իրավաբան պրն Լ. Սիմոնյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը, իսկ այնուհետեւ՝ պրն Ե. Կիրակոսյանը:

3. Դիմումատուն պնդել է, որ իր նկատմամբ անօրինականորեն կիրառվել են

գաղտնի դիտման միջոցներ, եւ որ այդ եղանակով ձեռք բերված ապացույցները քրեական վարույթներում օգտագործվել են իր դեմ՝ դրանով իսկ հանգեցնելով վարույթների անարդար լինելուն:

4. Դիմումատուի գաղտնի դիտման եւ այդ եղանակով ձեռք բերված ապացույցների թույլատրելիության վերաբերյալ բողոքների մասին ծանուցումը 2016 թվականի օգոստոսի 30-ին ուղարկվել է Կառավարություն, իսկ գանգատը մնացած մասով հայտարարվել է անընդունելի՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 54-րդ կանոնի 3-րդ կետի:

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

5. Դիմումատուն ծնվել է 1956 թվականին եւ նախքան կալանավորումն ապրել է Երեւանում: Գանգատը Դատարան ներկայացնելու պահին դիմումատուն իր պատիժը կրելիս է եղել Աբովյանի ուղղիչ հիմնարկում:

6. Դիմումատուն աշխատել է որպես Աբովյանի ուղղիչ հիմնարկի կանանց տեղամասի պետի տեղակալ:

7. 2010 թվականի փետրվարի 2-ին Նույն տեղամասի դատապարտյալներից մեկը՝ Ա.Ս.-ն, Հայաստանի ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վարչության (Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վարչություն) պետին հաղորդում է ներկայացրել, որ դիմումատուն կաշառք է պահանջել բաց ուղղիչ հիմնարկ տեղափոխելու դիմաց:

8. Նույն օրը Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վարչության պետը դիմել է Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան (Վարչական շրջանի դատարան)՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ձեռնարկելու թույլտվություն ստանալու համար: Միջնորդության մեջ նշված է եղել հետեւյալը.

«[2010 թվականի փետրվարի 2]-ին ... [Ա.Ս.-ն] դիմել է [Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վարչություն]՝ պնդելով, որ... [դիմումատուն] իրենից

կաշառք է պահանջել...

Այսպիսով, [Ա.Ս.-ի] գործողությունները պարունակում են 311-րդ հոդվածով սահմանված հանցագործության տարրեր:

Տվյալ հանցագործության հանգամանքներն ամբողջությամբ բացահայտելու եւ դրանում ներգրավված անձանց ինքնությունը պարզելու նպատակով անհրաժեշտ է ձեռնարկել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, մասնավորապես՝ տեսագրում եւ ձայնագրում:

Հաշվի առնելով վերոնշյալը եւ վկայակոչելով [Հայաստանի Հանրապետության] «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքը եւ [Զրեական դատավարության օրենսգրքի] 284-րդ հոդվածը՝ ես որոշում եմ միջնորդություն ներկայացնել [Վարչական շրջանի դատարան]՝ մեկ ամիս ժամկետով տեսագրում եւ ձայնագրում իրականացնելու թույլտվություն ստանալու համար»:

9. 2010 թվականի փետրվարի 3-ին Վարչական շրջանի դատարանը բավարարել է միջնորդությունը: Համապատասխան որոշման մեջ նշված է եղել հետեւյալը.

«[2010 թվականի փետրվարի 2]-ին ... [Ա.Ս.-ն] դիմել է [Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վարչություն]՝ պնդելով, որ... [դիմումատուն] իրենից կաշառք է պահանջել...

Այսպիսով, [Ա.Ս.-ի] գործողությունները պարունակում են 311-րդ հոդվածով սահմանված հանցագործության տարրեր:

Հաշվի առնելով այն փաստը, որ տվյալ հանցագործության հանգամանքներն ամբողջությամբ բացահայտելու եւ դրանում ներգրավված անձանց ինքնությունը պարզելու նպատակով անհրաժեշտ է ձեռնարկել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ [Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վարչության] պետն օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ձեռնարկելու, այն է՝ տեսագրում եւ ձայնագրում իրականացնելու միջնորդություն է ներկայացրել:

Ուսումնասիրելով հավաքված նյութերը եւ ներկայացված միջնորդությունը՝ դատարանը գտնում է, որ միջնորդությունը հիմնավորված է եւ պետք է բավարարվի:

Հաշվի առնելով վերոնշյալը եւ վկայակոչելով [Հայաստանի Հանրապետության] [Զրեական դատավարության օրենսգրքի] 14-րդ, 41-րդ, 278-րդ, 281-րդ, 284-րդ, 286-րդ հոդվածները եւ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքը՝ դատարանը որոշում է՝

բավարարել միջնորդությունը:

Թույլատրել մեկ ամիս ժամկետով տեսագրում եւ ձայնագրում կատարել՝ վերը նշված հանցագործության բացահայտման նպատակով:

Որոշման կատարումը հանձնարարել [Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վարչությանը]:

Սույն որոշումը ենթակա է բողոքարկման Վերաքննիչ քրեական դատարան տասնհինգօրյա ժամկետում»:

10. Նույն օրը ոստիկանությունը գաղտնի օպերացիա է սկսել՝ հսկողության տակ վերցնելով դիմումատուին: Ա.Ս.-ն հեռախոսով կապ է հաստատել դիմումատուի հետ՝ նշանակելով հանդիպում, որի ընթացքում դիմումատուն, *inter alia* (ի թիվս այլնի), հարցրել է Ա.Ս.-ին, թե արդյոք վերջինս կարող է ի վերջո տալ գումարը: Այս խոսակցությունը ոստիկանության կողմից վերահսկվել է: Նրանց հանդիպման համար, որը տեղի է ունեցել ավելի ուշ՝ նույն օրը, ոստիկանությունը Ա.Ս.-ին ձայնագրիչ է տրամադրել եւ հրահանգել նրան ձայնագրել դիմումատուի հետ իր խոսակցությունը: Ա.Ս.-ն եւ դիմումատուն հանդիպել են դիմումատուի տան մոտ եւ քննարկել տրվելիք գումարների հետ կապված հարցեր:

11. 2010 թվականի փետրվարի 4-ին ոստիկանության ծառայողները Ա.Ս.-ին հատուկ քիմիական նյութով մշակված թղթադրամներ են տվել՝ դրանք դիմումատուին հանձնելու համար:

Նույն օրը դիմումատուն Ա.Ս.-ից ստացել է գումարը, եւ նրանց հանդիպման ընթացքում խոսակցությունը կրկին ձայնագրիչով ձայնագրվել է: Գումարն ստանալուց անմիջապես հետո ոստիկանությունը մոտեցել է դիմումատուին եւ ձեռքակալել նրան՝ այդ ընթացքում տեսախցիկով նկարահանելով այս միջադեպը:

12. 2010 թվականի փետրվարի 7-ին դիմումատուն կալանավորվել է, եւ նրան մեղադրանք է առաջադրվել քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածով՝ առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու համար: Դիմումատուն իր մեղքը չի ընդունել եւ հայտարարել է, որ Ա.Ս.-ն իրեն որոշակի գումար է պարտք եղել, որն էլ նա իրականում վերադարձնելիս է եղել:

13. 2010 թվականի փետրվարի 8-ին գաղտնի օպերացիայի արդյունքում կատարված տեսաձայնագրությունները հանձնվել են նախաքննության մարմնին: Հետագայում դրանք ուսումնասիրվել են տեսագրման (ձայնագրման) դատական փորձագետի կողմից, եւ կազմվել է փորձագիտական եզրակացություն:

14. 2010 թվականի մայիսի 11-ին քննիչը քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ եւ 4-րդ

կետերով եւ 4-րդ մասի 2-րդ կետով եւ 34-313-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նոր մեղադրանքներ է առաջադրել դիմումատուին՝ խարդախության, կաշառք ստանալու եւ կաշառքի միջնորդության փորձի համար:

15. 2010 թվականի մայիսի 12-ին նախաքննությունն ավարտվել է: Նույն օրը դիմումատուին եւ նրա փաստաբանին տրամադրվել են գործի նյութերը: Այդ օրը նա տեղեկացել է դատարանի 2010 թվականի փետրվարի 3-ի որոշման եւ այդ որոշման հիման վրա կատարված գաղտնի դիտման մասին:

16. 2010 թվականի մայիսի 25-ին կազմվել է մեղադրական եզրակացությունը, եւ գործն ուղարկվել է դատարան:

17. Վարչական շրջանի դատարանում վարույթի ժամանակ դիմումատուն գաղտնի օպերացիայի արդյունքում կատարված ձայնագրությունները եւ համապատասխան փորձագիտական եզրակացությունն ապացույցների կազմից հանելու միջնորդություն է ներկայացրել: Նա պնդել է, որ 2010 թվականի փետրվարի 3-ի որոշումն անորոշ էր, քանի որ դրանում չի նշվել իր՝ որպես այն անձի անունը, որին պետք է գաղտնի դիտեն: Նա պնդել է, որ դատարանի որոշումը կարող էր հիմք ծառայել ցանկացած անձի դիտման համար: Այսպիսով, իրեն գաղտնի դիտել են առանց դատարանի որոշման՝ խախտելով Սահմանադրության 23-րդ հոդվածի պահանջները, այդ թվում՝ մասնավոր կյանքի եւ հաղորդակցության գաղտնիության նկատմամբ հարգանքի իրավունքը եւ Զրեական դատավարության օրենսգրքի 286-րդ հոդվածը: Այնուհետեւ ապացույցների թույլատրելիության մասով նա հիմնվել է Սահմանադրության 22-րդ հոդվածի եւ Զրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի վրա:

18. Դիմումատուի փաստարկների համաձայն՝ Վարչական շրջանի դատարանը որոշել է հետաձգել այդ միջնորդության քննությունը եւ դրան անդրադառնալ դատավճռում:

19. 2010 թվականի նոյեմբերի 9-ի իր դատավճռով Վարչական շրջանի դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչել առաջադրված մեղադրանքում եւ նշանակել ինը տարի ժամկետով պատիժ: Դիմումատուի մեղքը հիմնավորելիս Վարչական շրջանի դատարանը հիմնվել է, *inter alia*, դատարանի 2010 թվականի փետրվարի 3-ի որոշման հիման վրա կատարված տեսաձայնագրությունների եւ դիմումատուի ու Ա.Ս.-ի 2010 թվականի փետրվարի 3-ի եւ 4-ի հանդիպումների ընթացքում նրանց խոսակցությունների, ինչպես նաեւ տեսագրման

(ձայնագրման) դատական փորձագետի փորձագիտական եզրակացության վրա: Այնուհետև նշվել են հետեւյալ ապացույցները՝ Ա.Ս.-ի ցուցմունքը, որը վարույթի ընթացքում տուժող Է ճանաչվել, վկաների ցուցմունքները, համապատասխան թղթադրամները, քիմիական նյութերի գծով դատական փորձագետի փորձագիտական եզրակացությունը, Ա.Ս.-ի անձնական գործը, դիմումատուի կողմից Ա.Ս.-ի համարին կատարված հեռախոսազանգերի վերաբերյալ բջջային կապի օպերատորներից ստացված տեղեկությունները, 2010 թվականի փետրվարի 2-ի միջնորդությունը եւ դատարանի 2010 թվականի փետրվարի 3-ի որոշումը: Վարչական շրջանի դատարանը նշել է, *inter alia*, որ դատավարական խախտումների վերաբերյալ դիմումատուի պնդումները չեն հաստատվել:

20. Դիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացրել, որում նա 2010 թվականի փետրվարի 3-ի որոշման առնչությամբ նմանատիպ փաստարկներ է բերել եւ պնդել է, որ Վարչական շրջանի դատարանը չպետք է հիմնվեր դիմման արդյունքների վրա:

21. 2011 թվականի մարտի 1-ին Վերաքննիչ քրեական դատարանը մերժել է դիմումատուի բողոքը՝ գտնելով, մասնավորապես, որ՝

«Ինչ վերաբերում է վերաքննիչ բողոքում բերված պատճառաբանություններին այն մասին, որ [դիմումատուն] իրավապահ մարմինների կողմից տեսանկարահանվել եւ ձայնագրվել է, նրա հեռախոսային խոսակցությունները գաղտնալսվել են ՀՀ Սահմանադրության, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իր իրավունքների եւ ազատությունների էական խախտմամբ, այն է՝ իրեն ձայնագրելու եւ տեսանկարահանելու համար՝ դատարանի համապատասխան որոշման բացակայության պայմաններում, ապա հարկ է նշել, որ քրեական գործի նյութերում առկա է դատական ակտ համապատասխան թույլտվության վերաբերյալ, այսինքն՝ համապատասխան տեսանկարահանումները ու ձայնագրությունները կատարվել են օրենքով սահմանված կարգով, եւ տվյալ դեպքում այդ առումով որոշակի սահմանափակումները եղել են արդարացված, հետեւաբար պաշտպանության կողմի նշված պատճառաբանությունները եւս անհիմն են, չեն բխում գործի օբյեկտիվ տվյալներից եւ այն բավարարելու առումով որեւէ իրավական հետեւանք առաջացնել չեն կարող:

Բացի այդ, բերված պատճառաբանությունները որեւէ կերպ չեն ազդել վերը վկայակոչված համապատասխան արձանագրություններում տեղ գտած տեղեկությունների հավաստիության եւ սույն գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»:

22. Դիմումատուն վճռաբեկ բողոք է ներկայացրել, որը Վճռաբեկ դատարանի 2011 թվականի ապրիլի 28-ի որոշմամբ անընդունելի է ճանաչվել:

հիմքերի բացակայության պատճառով:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ա. Սահմանադրություն (տվյալ ժամանակահատվածում գործող)

23. 22-րդ հոդվածով արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը:

23-րդ հոդվածով նախատեսվում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ հարգվի իր մասնավոր ու ընտանեկան կյանքը: Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով, դատարանի որոշմամբ:

Բ. Քրեական դատավարության օրենսգիրք

24. 278-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ դատարանը քննում է քննչական, օպերատիվ-հետախուզական գործողություններ կատարելու եւ անձի սահմանադրական իրավունքները սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ միջնորդությունները:

25. 281-րդ հոդվածով սահմանվում է, որ դատարանի որոշմամբ են կատարվում այն օպերատիվ-հետախուզական գործողությունները, որոնք կապված են քաղաքացիների նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման հետ: Դատարանի որոշման հիման վրա իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները սահմանվում են «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով:

26. 284-րդ հոդվածով սահմանվում է, որ անձանց նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակում նախատեսող օպերատիվ-հետախուզական միջոցառումները, բացառությամբ այն դեպքերի, երբ խոսակցության մասնակիցներից կամ հաղորդակցվողներից մեկը նախապես դրանք լսելու կամ վերահսկելու համաձայնություն է տվել, կարող են իրականացվել

միայն դատարանի որոշմամբ: Դրանով սահմանվում է նաեւ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող մարմնի ղեկավարի կողմից ներկայացված՝ հեռախոսային խոսակցությունների գաղտնալսում իրականացնելու թույլտվություն ստանալու միջնորդությունների դատական քննարկման ընթացակարգը: Միջնորդության մեջ նշվում են այդպիսի միջոցառումների իրականացման հիմքերը, այն տվյալները, որոնք նախատեսվում է ստանալ դրանց արդյունքում, միջոցառումների իրականացման վայրը եւ ժամկետը, ինչպես նաեւ անհրաժեշտ այլ մանրամասներ: Միջնորդությանը կցվում են բոլոր այն նյութերը, որոնցով հիմնավորվում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը: Դատարանը պետք է նշի միջնորդությունը բավարարելու կամ մերժելու հիմքերը:

27. 286-րդ հոդվածով սահմանվում է, որ դատարանի որոշման մեջ պետք է նշված լինեն որոշումը կազմելու օրը, ամիսը, տարին եւ տեղը, դատավորի ազգանունը, միջնորդություն ներկայացրած պաշտոնատար անձը, քննչական գործողություններ կամ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ կատարելու կամ դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին նշում՝ ցույց տալով այդ գործողությունը կամ միջոցը եւ ում վրա է տարածվում, որոշման գործողության ժամկետը, որոշումը կատարելու համար իրավասու պաշտոնատար անձը կամ մարմինը, դատավորի կնիքով վավերացված ստորագրությունը:

28. 289-րդ հոդվածով սահմանվում է, որ քննչական գործողություններ եւ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ կատարելու, ինչպես նաեւ դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին դատական որոշումների բողոքարկումը կատարվում է սույն օրենսգրքի 287 եւ 288 հոդվածներով նախատեսված կանոններով (որոնցով սահմանվում է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ դատական որոշման բողոքարկման ընթացակարգը):

29. 376¹ հոդվածի 8-րդ կետում նշվում է, որ նույն հոդվածում նշված դատական ակտերից բացի, այլ դատական ակտեր կարող են բողոքարկվել Զրեական դատավարության օրենսգրքով սահմանված դեպքերում:

30. 379-րդ հոդվածով սահմանվում են առաջին ատյանի դատարանների դատավճիռները եւ որոշումները վերաքննության կարգով բողոքարկելու ժամկետները:

379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը կարող են վերաքննության կարգով բողոքարկվել հրապարակման օրվանից տասնօրյա ժամկետում:

379-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ ժամկետանց բողոքները թողնվում են առանց քննության, որի վերաբերյալ դատարանը կայացնում է որոշում:

Գ. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենք

31. 14-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում են օպերատիվ-հետախուզական միջոցառումների հետեւյալ տեսակները.

- 1) օպերատիվ հարցում.
- 2) օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում.
- 3) համեմատական հետազոտումների նմուշների հավաքում.
- 4) հսկիչ գնում.
- 5) վերահսկելի մատակարարում եւ գնում.
- 6) իրերի եւ փաստաթղթերի հետազոտում.
- 7) արտաքին դիտում.
- 8) ներքին դիտում.
- 9) անձի նույնացում.
- 10) շենքերի, կառույցների, տեղանքի, շինությունների եւ տրանսպորտային միջոցների հետազոտում.
- 11) նամակագրության, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների վերահսկում.
- 12) հեռախոսային խոսակցությունների վերահսկում.
- 13) օպերատիվ ներդրում.
- 14) օպերատիվ փորձարարություն.

15) ֆինանսական տվյալների մատչելիության ապահովում եւ ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկում.

16) կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումները սահմանվում են միայն օրենքով:

32. 21-րդ հոդվածով սահմանվում է, որ արտաքին դիտումը, առանց բնակարանի անձեռնմխելիության խախտման, անձանց հետեւելը կամ առանձին դեպքերի եւ իրադարձությունների ընթացքի վերահսկումն է բաց տարածությունում կամ հասարակական վայրերում՝ հատուկ եւ այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց, ինչպես նաեւ դիտման արդյունքների ամրագրումը տեսանկարահանման, լուսանկարահանման, էլեկտրոնային եւ այլ կրիչների միջոցով կամ առանց դրանց:

33. 26-րդ հոդվածով սահմանվում է, որ հեռախոսային խոսակցությունների վերահսկումը հատուկ եւ այլ տեխնիկական միջոցների օգտագործմամբ իրականացվող խոսակցությունների, այդ թվում՝ ինտերնետային հեռախոսային խոսակցությունների եւ էլեկտրոնային հաղորդումների գաղտնի վերահսկումն է:

Դ. Վճռաբեկ դատարանի համապատասխան նախադեպային իրավունքը

34. Վճռաբեկ դատարանը 2014 թվականի մարտի 28-ի իր թիվ Ս-903/05 որոշման մեջ քննել է խուզարկության եւ առգրավման մասին դատարանի որոշման դեմ այն անձի բողոքը Վերաքննիչ քրեական դատարանի կողմից վարույթ ընդունելը մերժելու մասին բողոքը, որի նկատմամբ քրեական վարույթները կարճվել էին, իսկ այդ որոշումը հրապարակվել էր համապատասխան վարույթները կարճվելուց տարիներ առաջ, եւ այդ մասին տվյալ անձը տեղեկացել էր, երբ իրեն տրամադրվել էին գործի նյութերը: Այդ որոշման համապատասխան մասերն ունեն հետեւյալ բովանդակությունը.

«... վիճարկվող դատական ակտի վերանայման նպատակը օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելն է... Այս առնչությամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման ժամկետների [կիրառման] համատեքստում անձին դատական պաշտպանության արդյունավետ միջոցներ տրամադրելու հետ կապված կա օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու խնդիր: Հետեւաբար [Վճռաբեկ դատարանը] գտնում է, որ անհրաժեշտ է նշել իր իրավական դիրքորոշումը ... որը կարող է ուղենիշ ծառայել նմանատիպ գործերով ճիշտ դատական

պրակտիկա ստեղծելու համար:

... մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ընդունված՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտը բողոքարկելու անձի իրավունքը ծագում է տվյալ դատական ակտը նրա համար փաստացի հասանելի դառնալու պահից ... [Այն է] ... անձը փաստացի ստացել է գործն ըստ էության չլուծող դատական ակտը ... կամ փաստացի ծանոթացել է դրան:

...

Գործն ըստ էության չլուծող դատական ակտերը ... «փաստացի հասանելի դառնալու» պահը կարող է տարբեր լինել: Մասնավորապես անձը գործն ըստ էության չլուծող դատական ակտի մասին կարող է տեղեկանալ ... տվյալ քննչական գործողության (օրինակ՝ խուզարկության) կատարման ընթացքում, նախաքննության ավարտին (օրինակ՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդակցության վերահսկման եւ այլ դեպքերում), գործը դատարան ուղարկելիս եւ այլն: Այսինքն՝ վերոնշյալ դատական ակտը բողոքարկելու ժամկետի հաշվարկն սկսվում է՝

ա) այն պահից, երբ անձը փաստացի ստացել է կամ ծանոթացել է տվյալ [դատական] ակտին (օրինակ՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների վերահսկման դեպքերում...).

բ) դատարանի որոշմամբ թույլատրված տվյալ քննչական գործողությունը, օրինակ՝ խուզարկությունը, սկսելու պահից, եթե խուզարկության ընթացքում անձը պաշտոնապես ծանուցվում է ձեռնարկված քննչական գործողությունների հիմքերի մասին...

... յուրաքանչյուր դեպքում դատարանը պետք է ճշտի, թե որ պահին է ծագել վիճարկվող որոշմանը ծանոթանալու անձի իրավունքը, եւ արդյոք վերջինս համապատասխան դատական ակտին ծանոթացել է ողջամիտ ժամկետներում ...»:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 8-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

35. Դիմումատուն բողոքել է, որ ինքը ենթարկվել է գաղտնի դիտման՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված երաշխիքների խախտմամբ, որում նշվում է հետեւյալը.

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր ու ընտանեկան կյանքի, բնակարանի եւ նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի

իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով եւ անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաեւ անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների եւ ազատությունների պաշտպանության նպատակով»:

Ա. Ընդունելիությունը

1. Կողմերի փաստարկները

36. Կառավարությունը նշել է, որ դիմումատուն չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները եւ իր բողոքները չի ներկայացրել վերջնական որոշման ընդունման օրվանից վեց ամսվա ընթացքում, ինչպես պահանջվում է Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետով:

37. Կառավարությունը նշել է, որ դիմումատուն դատարանի 2010 թվականի փետրվարի 3-ի որոշմանը ծանոթացել է, երբ 2010 թվականի մայիսի 12-ին իրեն են տրամադրվել գործի նյութերը, սակայն այն չի բողոքարկել այդ օրվանից հետո տասնհինգ օրվա ընթացքում՝ խախտելով Զրեական դատավարության օրենսգրքի 376¹-րդ եւ 379-րդ հոդվածներով նախատեսված ընթացակարգը: Եթե դիմումատուն պնդեր, որ ընթացակարգը արդյունավետ պաշտպանության միջոց չէ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված իր բողոքների համար, վեցամսյա ժամկետը կհամարվեր սկսված 2010 թվականի մայիսի 12-ից՝ այն օրվանից, երբ նա ծանոթացել էր որոշմանը: Ամեն դեպքում, գործը քննող դատարանում վարույթի ընթացքում որպես ապացույց տեսաձայնագրությունների թույլատրելիության վիճարկումը չէր կարող համարվել 8-րդ հոդվածի առնչությամբ բողոքի մասով արդյունավետ պաշտպանության միջոց: Կառավարությունը հիմնվել է *Կիրակոսյանի* գործով (թիվ 2) Դատարանի այն եզրահանգումների վրա, որ քրեական գործն ըստ էության քննող դատարանում խուզարկության մասին որոշման հիմքերի վավերության վիճարկումը 8-րդ հոդվածի նպատակներով արդյունավետ պաշտպանության միջոց չի եղել (տե՛ս *Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի (թիվ 2)* [Kirakosyan v. Armenia (no. 2)], թիվ 24723/05, § 49, 2016 թվականի փետրվարի 4):

38. Դիմումատուն նշել է, որ ազգային մակարդակում քրեական վարույթի ընթացքում ինքը պնդել է, որ իր նկատմամբ գաղտնի դիտումը եղել է անօրինական, քանի դեռ չի տեղեկացել դատարանի 2010 թվականի փետրվարի 3-ի որոշման մասին եւ այդ որոշման հիման վրա իրականացված գաղտնի օպերացիայի մասին: Եթե ինքը 2010 թվականի փետրվարի 3-ի որոշումը բողոքարկեր դրա ընդունումից ավելի քան երեք ամիս հետո, նրա բողոքը կհամարվեր ժամկետանց: Ամեն դեպքում, նրա գաղտնի դիտման արդյունքում

հավաքված ապացույցների հետ կապված հարցերը չեն կարող քննարկվել առանձին վարույթով այն դեպքում, երբ այդ ապացույցները նրան առաջադրված քրեական մեղադրանքի հարցը լուծող՝ դատարան ներկայացված բոլոր ապացույցների հիմնական մասն էին կազմում: Քրեական դատավարության օրենսգրքով չի նախատեսվում ընթացակարգ, որի միջոցով հնարավոր կլիներ առանձին վարույթով վիճարկել գործը քննող դատարանի կողմից քննության ենթակա ապացույցների թույլատրելիությունը:

2. *Դատարանի գնահատականը*

39. Դատարանը կրկին նշում է, որ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված՝ իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու կանոնը պարտավորեցնում է այն անձանց, որոնք ցանկանում են պետության դեմ գործ հարուցել որեւէ միջազգային դատական ատյանում, առաջին հերթին օգտվել ներպետական իրավական համակարգով նախատեսված իրավական պաշտպանության միջոցներից՝ դրանով իսկ պետությանը զերծ պահելով միջազգային ատյանի առջեւ իրենց գործողությունների համար պատասխան տալուց՝ մինչեւ իր սեփական իրավական համակարգի միջոցով խնդիրները լուծելու հնարավորություն ունենալը: Այդ կանոնին համապատասխանելու համար դիմումատուն պետք է դիմի այն իրավական պաշտպանության միջոցներին, որոնք հասանելի են եւ բավարար՝ ենթադրյալ խախտումների դիմաց փոխհատուցում ստանալու համար (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Վուչկովիչն ու այլք ընդդեմ Սերբիայի* (նախնական առարկություն) [ՄԴ], [Vučković and Others v. Serbia (preliminary objection) [GC]], թիվ 17153/11 եւ եւս 29-ը, §§ 70 եւ 71, 2014 թվականի մարտի 25):

40. Պետք է սպառվեն իրավական պաշտպանության միայն այն միջոցները, որոնք արդյունավետ են: Իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու մասին պնդող Կառավարությունը պարտավոր է Դատարանում ապացուցել, որ իրավական պաշտպանության այդ միջոցն արդյունավետ է եղել եւ տվյալ ժամանակահատվածում տեսականորեն ու գործնականում հասանելի, այսինքն՝ այն մատչելի է եղել, դրա միջոցով հնարավոր է եղել դիմումատուի բողոքների մասով փոխհատուցում տրամադրել, ինչպես նաեւ դրանով ընձեռվել է հաջողության հասնելու ողջամիտ հեռանկար: Այն դեպքում, երբ ապացուցման այս պարտականությունը բավարարված է, դիմումատուն է պարտավոր

ապացուցել, որ Կառավարության կողմից առաջարկվող իրավական պաշտպանության միջոցը, ըստ էության, սպառվել է կամ որոշ պատճառներով գործի կոնկրետ հանգամանքներում եղել է ոչ պատշաճ եւ անարդյունավետ, կամ որ առկա են եղել հատուկ հանգամանքներ, որոնք նրան ազատել են այդ պահանջի կատարումից (տե՛ս *Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի* (որոշում) [Kalashnikov v. Russia (dec.)], թիվ 47095/99, ՄԻԵԴ 2001-XI (քաղվածքներ)):

41. Եթե իրավական պաշտպանության միջոցները հասանելի չեն, կամ եթե դրանք համարվում են անարդյունավետ, ապա Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված վեցամսյա ժամկետը, ըստ էության, սկսվում է բողոքարկվող ակտի կայացման օրվանից (տե՛ս *Բայրամը եւ Յիլդիրիմն ընդդեմ Թուրքիայի* (որոշում) [Bayram and Yildirim v. Turkey (dec.)], թիվ 38587/97, ՄԻԵԴ 2002-III): Այսպիսով, ժամկետն սկսում է հաշվարկվել իրավական պաշտպանության այն միջոցների սպառման արդյունքում վերջնական որոշում կայացնելուց հետո միայն, որոնք համարժեք եւ արդյունավետ են բողոքարկված խնդրի առնչությամբ փոխհատուցում տրամադրելու համար:

Այս առումով իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու վերաբերյալ 35-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները եւ վեցամսյա ժամկետը սերտորեն փոխկապակցված են, քանի որ դրանք ոչ միայն ներկայացվում են նույն հոդվածում, այլ նաեւ մեկ նախադասությամբ, որի քերականական կառուցվածքը ենթադրում է այդպիսի կապ (տե՛ս *Բերձենիշվիլին ընդդեմ Ռուսաստանի* (որոշում) [Berdzenishvili v. Russia (dec.)], թիվ 31697/03, ՄԻԵԴ 2004-II (քաղվածքներ)):

42. Վերադառնալով սույն գործի հանգամանքներին՝ Դատարանն ի սկզբանե նշում է, որ դիմումատուն գաղտնի դիտման հարցը բարձրացրել է գործը քննող դատարանում վարույթի ընթացքում, իսկ այնուհետեւ իր նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը բողոքարկելիս:

43. Դատարանը համաձայն է Կառավարության հետ, որ դիմումատուին առաջադրված քրեական մեղադրանքի հարցը լուծող դատարանները չէին կարող Կոնվենցիայի 8-րդ հոդվածի առնչությամբ նրա բողոքների մասով արդյունավետ պաշտպանության միջոցներ տրամադրել: Թեեւ այս դատարաններն ապացույցների թույլատրելիության հետ կապված հարցերը քննելու իրավասություն ունեցել են, նրանք իրավունք չեն ունեցել անդադառնալ ըստ

Էության Կոնվենցիային առնչվող բողոքին առ այն, որ միջամտությունը դիմումատուի մասնավոր կյանքի եւ նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունքին «օրենքով նախատեսված» կամ «ժողովրդավարական հասարակության համար անհրաժեշտ» չի եղել, բողոքի մասով համարժեք իրավական պաշտպանություն տրամադրելու իրավունք նրանք առավել եւս չեն ունեցել (տե՛ս *Խանն ընդդեմ Միացյալ Թագավորության* [Khan v. the United Kingdom], թիվ 35394/97, § 44, ՄԻԵԴ 2000-V. Պ. Գ.-ն եւ Զ. Հ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության [P.G. and J.H. v. the United Kingdom], թիվ 44787/98, § 86, ՄԻԵԴ 2001-IX. *Գորանովա-Կարաենեւան ընդդեմ Բուլղարիայի* [Goranova-Karaeneva v. Bulgaria], թիվ 12739/05, § 59, 2011 թվականի մարտի 8. *Իրֆան Գյուզելն ընդդեմ Թուրքիայի* [İrfan Güzel v. Turkey], թիվ 35285/08, §§ 106 եւ 107, 2017 թվականի փետրվարի 7. եւ, որպես համեմատություն, *Դրագոժեւիչն ընդդեմ Խորվաթիայի* [Dragojević v. Croatia], թիվ 68955/11, §§ 72-74, 2015 թվականի հունվարի 15. *Շանտարեն եւ Լաբազնիկովսն ընդդեմ Լատվիայի* [Šantare and Labazņikovs v. Latvia], թիվ 34148/07, §§ 40-44, 2016 թվականի մարտի 31 եւ *Ռաձհաբ Մագոմեդովն ընդդեմ Ռուսաստանի* [Radzhab Magomedov v. Russia], թիվ 20933/08, §§ 77-79, 2016 թվականի դեկտեմբերի 20):

44. Հետեւաբար Դատարանը եզրակացնում է, որ դիմումատուի նկատմամբ հարուցված քրեական գործն ըստ Էության քննող դատարաններում գաղտնի դիտման հարցը բարձրացնելը, ներպետական իրավունքի վիճակն ու պրակտիկան հաշվի առնելով, չի կարող դիտվել 8-րդ հոդվածի առնչությամբ նրա բողոքների մասով իրավական պաշտպանության արդյունավետ միջոց:

45. Գալով այս եզրահանգման՝ Դատարանն այնուհետեւ պետք է ուսումնասիրի, թե արդյոք դիմումատուն իր տրամադրության տակ ունեցել է իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, որը նա պիտի սպառեր նախքան Դատարան դիմելը: Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն իրավունք է ունեցել բողոքարկելու դատարանի՝ իրեն գաղտնի դիտելը թույլ տվող որոշումը, երբ նա տեղեկացել է դրա մասին:

46. Դատարանը նշում է, որ Կառավարությունը չի հստակեցրել Վերաքննիչ դատարանի կողմից 2010 թվականի փետրվարի 3-ի որոշման հնարավոր վերանայման շրջանակները, եթե դիմումատուն բողոքարկեր այն: Ներպետական օրենսդրության որոշակի դրույթների բացակայության դեպքում բնավ պարզ չէ, թե

արդյոք Վերաքննիչ դատարանն իրավասու էր քննել, թե վիճարկվող միջամտությունն արդյոք ծայրահեղ սոցիալական անհրաժեշտություն էր եւ արդյոք համաչափ էր հետապնդվող նպատակներին (*Փեքն ընդդեմ Միացյալ Թագավորության* [Peck v. the United Kingdom], թիվ 44647/98, §§105-107, ՄԻԵԴ 2003-Ի եւ *Կիգանն ընդդեմ Միացյալ Թագավորության* [Keegan v. the United Kingdom], թիվ 28867/03, §§ 40-43, ՄԻԵԴ 2006-X):

47. Դատարանն այնուհետեւ նշում է, որ դատարանի տվյալ որոշման մեջ նշված է եղել, որ այն կարող է բողոքարկվել տասնհինգ օրվա ընթացքում, մինչդեռ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածով սահմանվում է գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման տասնօրյա ժամկետ (տե՛ս վերելում՝ 9-րդ եւ 30-րդ պարբերությունները): Ամեն դեպքում ակնհայտ է, որ շահագրգիռ անձը չէր կարող ժամանակին բողոք ներկայացնել այն դեպքում, երբ վերջինս որոշման եւ դրա հիման վրա կատարված գաղտնի դիտման մասին տեղեկացել էր այդ ժամանակահատվածից հետո: Հիմնվելով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մարտի 28-ի որոշման վրա (տե՛ս վերելում՝ 34-րդ պարբերությունը)՝ Կառավարությունը նշել է, որ դիմումատուն կարող էր բողոքարկել 2010 թվականի փետրվարի 3-ի որոշումը դրան ծանոթանալու պահից, այն է՝ 2010 թվականի մայիսի 12-ից հետո տասնհինգ օրվա ընթացքում, ինչը նա չի արել: Պետք է նշել, այդուհանդերձ, որ Վճռաբեկ դատարանի համապատասխան որոշումը վերաբերում էր կոնկրետ իրավիճակի, երբ անձը փորձել է բողոքարկել օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու թույլտվություն տվող դատական ակտն այն դեպքում, երբ մեղադրող կողմը դատարանում նրան առաջադրված մեղադրանքները չի պաշտպանել: Հետեւաբար ներպետական նախադեպային իրավունքի տրված օրինակով չի կարող հիմնավորվել Կառավարության այն պնդումը, որ դիմումատուն որոշումը բողոքարկելու հնարավորություն գործնականում ունեցել է՝ նախաքննության ավարտին տեղեկանալով դրա մասին այն դեպքում, երբ նրա դեմ հարուցված քրեական գործը շուտով ուղարկվելու էր գործը քննող դատարան՝ այն ըստ էության քննելու համար: Կառավարությունը չի ներկայացրել ներպետական նախադեպային իրավունքի որեւէ օրինակ, որի դեպքում Վերաքննիչ դատարանը քննության է առել բողոք գործն ըստ էության չլուծող այն որոշման դեմ, որը վերաբերում է այնպիսի գործով մեղադրական ակտի մաս կազմող ապացույցին, որը փոխանցվել է կամ պետք է փոխանցվեր անձին առաջադրված քրեական

մեղադրանքի հարցը լուծող դատարան: Ավելին, քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթներով սահմանվում է գործն ըստ էության չլուծող դատական ակտերը դրանց հրապարակման օրվանից հետո տասն օրվա ընթացքում բողոքարկելու սովորական ընթացակարգը (տե՛ս վերելում՝ 30-րդ պարբերությունը), մինչդեռ 2014 թվականի մարտի 28-ի իր որոշման մեջ Վճռաբեկ դատարանը պարզաբանել է այդ բողոքները ներկայացնելու ժամկետների հաշվարկման սկզբունքները (տե՛ս վերելում՝ 34-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանը կոչված չի եղել քննելու Վերաքննիչ դատարանի լիազորություններն ու իրավասությունները քրեական վարույթի ընթացքում ընդունված՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ բողոքները քննելիս, երբ կազմվել է մեղադրական ակտ, որի արդյունքում գործի նյութերը փոխանցվել են գործը քննող դատարան, մինչդեռ Կառավարությունը, ինչպես վերը նշվել է, չի ներկայացրել ներպետական նախադեպային իրավունքի որեւէ օրինակ, երբ Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել քրեական մեղադրանքի հարցը լուծող դատարան ներկայացված՝ մեղավորությունը հաստատող բոլոր ապացույցների հիմնական մասը կազմող ապացույցի հետ կապված դատարանի որոշման դեմ բողոքի վերաբերյալ:

48. Կողմերը չեն վիճարկել, որ դիմումատուն եւ նրա փաստաբանը գաղտնի դիտման միջոցառումների եւ դրանք իրականացնելու թույլտվություն տվող դատարանի համապատասխան որոշման մասին տեղեկացել են 2010 թվականի մայիսի 12-ին: Կազմվել է մեղադրական ակտ, եւ գործը դատարան է փոխանցվել 2010 թվականի մայիսի 25-ին (տե՛ս վերելում՝ 15-րդ եւ 16-րդ պարբերությունները), այն է՝ մոտ երկու շաբաթ հետո: Հստակ ընթացակարգի եւ, ինչպես արդեն նշվել է, գործն ըստ էության չլուծող դատական ակտերի առնչությամբ իրավական պաշտպանության միջոցների վերաբերյալ համապատասխան ներպետական պրակտիկայի բացակայության պայմաններում փաստ, որը Վճռաբեկ դատարանի կողմից հաստատվել է 2014 թվականի մարտի 28-ի իր որոշման մեջ (տե՛ս վերելում՝ 34-րդ պարբերությունը), Դատարանը վստահ չէ, որ նախաքննության ավարտի փուլում առանձին ընթացակարգով դատարանի 2010 թվականի փետրվարի 3-ի որոշումը բողոքարկելը հասանելի եւ բավարար իրավական պաշտպանության միջոց է եղել, որը թույլ կտար դիմումատուին փոխհատուցում ստանալ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի ենթադրյալ խախտման համար:

49. Վերոնշյալ եզրահանգումները հաշվի առնելով՝ Ղատարանը գտնում է, որ Վարչական շրջանի դատարանի 2010 թվականի փետրվարի 3-ի որոշումը բողոքարկելն արդյունավետ պաշտպանության միջոց չի եղել սպառնելու համար: Հետեւաբար այն մերժում է իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառնելու վերաբերյալ Կառավարության առարկությունը:

50. Ղատարանը նկատում է, որ դիմումատուն իր գանգատը Ղատարան է ներկայացրել իր դեմ հարուցված քրեական վարույթով վերջնական դատավճռի կայացումից հետո վեց ամսվա ընթացքում: Հաշվի առնելով Ղատարանի վերոնշյալ եզրահանգումը, որ գաղտնի դիտման հետ կապված՝ Կոնվենցիային առնչվող բողոքները դիմումատուին առաջադրված քրեական մեղադրանքի հարցը լուծող դատարան ներկայացնելը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով արդյունավետ պաշտպանության միջոց չի եղել, Ղատարանն այժմ պետք է պարզի, թե արդյոք դիմումատուն հետեւել է վեցամսյա ժամկետի կանոնին:

51. Հղում անելով *Կիրակոսյանի (թիվ 2)* գործով Ղատարանի վճռին՝ Կառավարությունը պնդել է, որ դիմումատուի՝ 8-րդ հոդվածի առնչությամբ բողոքները պետք է համարվեն ժամկետանց ներկայացված (տե՛ս վերելում հիշատակված՝ *Կիրակոսյանի (թիվ 2)* գործը, § 49), քանի որ նա դրանք չի ներկայացրել այն պահից սկսած վեցամսյա ժամանակահատվածում, երբ տեղեկացել է գաղտնի դիտման միջոցառումների մասին եւ ծանոթացել դատարանի համապատասխան որոշմանը, որը հիմք է ծառայել դրանց համար: Ղատարանը նկատում է, այդուհանդերձ, որ *Կիրակոսյանի (թիվ 2)* գործը վերաբերել է դիմումատուի ներկայությամբ կատարված խուզարկությանը (տե՛ս վերելում հիշատակված՝ *Կիրակոսյանի (թիվ 2)* գործը, §§ 14 եւ 15), այսինքն՝ միջոցառման մասին դիմումատուն տեղյակ է եղել նախաքննության ընթացքում՝ ի տարբերություն սույն գործով իրավիճակի, երբ դիմումատուն գաղտնի դիտման միջոցառումների մասին իմացել է նախաքննության ավարտից հետո, երբ նրա դեմ հարուցված քրեական գործն ուղարկվել է գործը քննող դատարան: Հատկանշական է, որ 2014 թվականի մարտի 28-ի իր որոշման մեջ Վճռաբեկ դատարանը շեշտել է նաեւ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման ընթացակարգի մասով այլ մոտեցում որդեգրելու անհրաժեշտությունը՝ կախված օպերատիվ-հետախուզական միջոցառման տեսակից: Դրանում նշվում է, որ խուզարկության դեպքում, օրինակ, համապատասխան ժամկետը կարող է սկսվել այն կատարելու պահից՝ ի

տարբերություն գաղտնի դիտման, որի դեպքում հաշվի է առնվում այն պահը, երբ անձը տեղեկացել է միջոցառման մասին (տե՛ս վերելում՝ 34-րդ պարբերությունը):

52. Դատարանը նշում է, որ դիմումատուն գաղտնի դիտման մասին տեղեկացել է նախաքննության վերջնական փուլում, երբ նրան տրամադրվել են գործի նյութերը, եւ որ դրանից կարճ ժամանակ անց կազմվել է մեղադրական եզրակացություն, որում մեղադրող կողմը նրա դեմ հարուցված գործը հիմնավորելու համար որպես ապացույց օգտագործել է վերահսկման արդյունքում ստացված նյութերը, եւ գործն ուղարկվել է քննող դատարան՝ այն ըստ էության քննելու համար: Այս համատեքստում եւ հաշվի առնելով Դատարանի վերոնշյալ եզրահանգումները, որ առանձին ընթացակարգով բողոք ներկայացնելը վարույթի այդ փուլում նույնպես իրավական պաշտպանության արդյունավետ միջոց չի եղել, հաշվի առնելով իրավական պաշտպանության այս միջոցի արդյունավետության հետ կապված անորոշությունը՝ Դատարանը գտնում է, որ ոչ ողջամիտ չի եղել այն, որ դիմումատուն փորձեր իր դժգոհությունները ներկայացնել գործը քննող դատարան: Այս եզրահանգումն այնուհետեւ հիմնավորվում է այն փաստով, որ ներպետական դատարանները փաստացի քննել են դիմումատուի բողոքները, որոնք առաջին հերթին վերաբերել են դիտման միջոցառումների ենթադրյալ անօրինականությանը (տե՛ս վերելում՝ 19-րդ եւ 21-րդ պարբերությունները), եւ հետեւաբար անդրադարձ են կատարել, ըստ էության, Կոնվենցիային առնչվող բողոքներին: Այս հանգամանքներում Դատարանը գտնում է, որ դիմումատուին չի կարելի նախատել իրավական պաշտպանության այնպիսի միջոցներով ներպետական դատարանների ուշադրությունը իր դժգոհությունների վրա հրավիրելու փորձի համար, որոնք նա սխալմամբ արդյունավետ է համարել (տե՛ս *Չուբկովը եւ այլք ընդդեմ Ռուսաստանի* [Zubkov and Others v. Russia], թիվ 29431/05 եւ եւս 2-ը, § 107, 2017 թվականի նոյեմբերի 7):

53. Այս համատեքստում Դատարանը գտնում է, որ ոչ ողջամիտ չի եղել, որ դիմումատուն Կոնվենցիային առնչվող իր բողոքները ներկայացնել իր դեմ ներկայացված քրեական մեղադրանքի հարցը լուծող դատարաններ, որպեսզի ներպետական դատարանները ազգային իրավական համակարգում ճշտումներ անելու հնարավորություն ունենային, դրանով իսկ հարգելով այն սկզբունքը, որ Կոնվենցիայով սահմանված պաշտպանության մեխանիզմը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ազգային համակարգերի համար օժանդակ մեխանիզմ է (տե՛ս, *mutatis mutandis* (*համապատասխան*

փոփոխություններով), *Էլ-Մասրին ընդդեմ Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետության* [ՄՊ] [*El-Masri v. the former Yugoslav Republic of Macedonia* [GC]], թիվ 39630/09, § 141, ՄԻԵԴ 2012):

54. Հետեւաբար Դատարանը մերժում է նաեւ վեցամսյա ժամկետի կանոնը չպահպանելու մասով Կառավարության առարկությունը:

55. Դատարանը նշում է, որ այս բողոքը, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով, ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետեւ նշում է, որ այն անընդունելի չէ որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ Էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

56. Դիմումատուն պնդել է, որ իր նկատմամբ կիրառված գաղտնի դիտումն անօրինական է եղել, քանի որ դա կատարվել է համապատասխան ներպետական իրավունքին հակասող՝ դատարանի որոշման հիման վրա: Այդ որոշման մեջ, ի հակադրություն Զրեական դատավարության օրենսգրքի 286-րդ հոդվածի պահանջների, նշված չի եղել այն անձը, որի նկատմամբ պետք է իրականացվեին դրա կողմից թույլատրված գաղտնի դիտման միջոցառումները: Գործի նյութերում չի եղել դատարանի որեւէ որոշում, որը թույլ կտար տեսագրել եւ ձայնագրել նրան: Չի եղել նաեւ որեւէ որոշում, որը թույլ կտար վերահսկել նրա հեռախոսային խոսակցությունները:

57. Կառավարությունն ընդունել է, որ տեղի է ունեցել միջամտություն դիմումատուի՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված իրավունքներին: Այդուհանդերձ, Կառավարությունը համարել է, որ այդ միջամտությունն արդարացված է եղել: Կառավարությունը նշել է, որ դիմումատուի գաղտնի դիտման թույլտվություն տվող՝ դատարանի որոշումն ընդունվել է Զրեական դատավարության օրենսգրքի 278-րդ, 281-րդ եւ 284-րդ հոդվածների եւ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի պահանջներին համապատասխան: Կառավարությունը պնդել է, որ դատարանի 2010 թվականի փետրվարի 3-ի որոշման տեքստից ակնհայտ է եղել, որ թույլատրված օպերատիվ-

հետախուզական միջոցառումները, այն է՝ ձայնագրումն ու տեսագրումը պետք է կատարվեն դիմումատուի նկատմամբ: Ավելին, այդ միջամտությունը հանցագործությունը քննելու եւ քրեական հետապնդում սկսելու իրավաչափ նպատակ է ունեցել եւ այդ նպատակին համաչափ է եղել:

2. *Դատարանի գնահատականը*

ա) *Արդյոք միջամտություն եղել է, թե՛ ոչ*

58. Կողմերն ընդունում են, որ Ա.Ս.-ի հետ դիմումատուի անձնական եւ հեռախոսային խոսակցությունների ձայնագրումը միջամտություն է եղել Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներին: Դատարանն այլ որոշում կայացնելու որեւէ պատճառ չունի (տե՛ս վերելում հիշատակված՝ *Խանի* գործը, §§ 9, 10 եւ 25. Վերջերս ընդդեմ Ֆրանսիայի [*Vetter v. France*], թիվ 59842/00, §§ 10 եւ 20, 2005 թվականի մայիսի 31, վերելում հիշատակված՝ *Դագոժեւիչի* գործը, § 78):

բ) *Արդյո՞ք միջամտությունը հիմնավորված էր*

i) *Ընդհանուր սկզբունքները*

59. Ցանկացած միջամտություն կարող է 8-րդ հոդվածի 2-րդ կետի շրջանակներում արդարացված լինել միայն այն դեպքում, երբ դա օրենքով նախատեսված է, 8-րդ հոդվածի 2-րդ կետում նշված մեկ կամ մի քանի իրավաչափ նպատակներ է հետապնդում եւ անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում այդպիսի նպատակի հասնելու համար (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Քենեդիի ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Kennedy v. the United Kingdom*], թիվ 26839/05, § 130, 2010 թվականի մայիսի 18):

60. «Օրենքով նախատեսված» ձեւակերպումը ենթադրում է, որ վիճարկելի միջոցառումը պետք է հիմնավորված լինի ներպետական իրավունքով եւ համատեղելի լինի իրավունքի գերակայության սկզբունքի հետ, ինչը հստակ նշված է Կոնվենցիայի նախաբանում եւ ներհատուկ է 8-րդ հոդվածի առարկային եւ նպատակին: Օրենքն այսպիսով պետք է բավարարի հետեւյալ որակական

պահանջները՝ այն պետք է հասանելի լինի շահագրգիռ անձի համար եւ կանխատեսելի լինի հետեւանքների մասով (տե՛ս *Ռոման Չախարովն ընդդեմ Ռուսաստանի* [ՄՊ] [*Roman Zakharov v. Russia* [GC]], թիվ 47143/06, §§ 228-230, ՄԻԵԴ 2015, հաջորդող հղումների հետ միասին):

61. Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք միջամտությունը «անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում» իրավաչափ նպատակ հետապնդելու առումով, Դատարանը կրկին նշում է, որ քաղաքացիներին գաղտնի դիտել կարելի է միայն 8-րդ հոդվածով նախատեսված դեպքերում այնքանով, որքանով դա խիստ անհրաժեշտ է ժողովրդավարական ինստիտուտների պաշտպանության համար: Փաստորեն, սա նշանակում է, որ չարաշահման դեմ համարժեք եւ արդյունավետ երաշխիքներ պետք է լինեն: Չնահատումը կախված է գործի բոլոր հանգամանքներից, օրինակ՝ հնարավոր միջոցառումների բնույթից, շրջանակներից եւ տեւողությունից, դրանք կարգադրելու համար պահանջվող հիմքերից, դրանք թույլ տալու, իրականացնելու եւ վերահսկելու իրավասություն ունեցող մարմիններից եւ ներպետական իրավունքով նախատեսված իրավական պաշտպանության միջոցների տեսակներից (տե՛ս վերելում հիշատակված՝ *Քենեդիի* գործը, § 153):

62. Դատարանը պետք է պարզի, թե արդյոք սահմանափակող միջոցառումները կարգադրելու եւ իրականացնելու նկատմամբ վերահսկողության ընթացակարգերը միտված են «միջամտությունը» «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ» դարձնելուն: Ավելին, վերահսկողության ընթացակարգերի ընթացքում ժողովրդավարական հասարակության արժեքներին պետք է հնարավորինս խիստ հետեւել, եթե 8-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով անհրաժեշտության սահմանները չափազանցված չեն (տե՛ս *Կվասնիցան ընդդեմ Սլովակիայի* [*Kvasnica v. Slovakia*], թիվ 72094/01, § 80, 2009 թվականի հունիսի 9. եւ վերելում հիշատակված՝ *Քենեդիի* գործը, § 154):

ii) Այդ սկզբունքների կիրառումը սույն գործի նկատմամբ

63. Սույն գործով գաղտնի դիտման միջոցառումներ թույլ տվող օրենսդրության առկայության հետ կապված դիմումատուն ընդհանուր առմամբ բողոք չի ներկայացրել: Նրա բողոքի հիմքն այդպիսի դիտման կոնկրետ օրինակ է

եղել, որը տեղի է ունեցել նրա դեմ հարուցված քրեական վարույթի շրջանակներում: Այս հանգամանքներում Ղատարանը, որպես կանոն, պետք է իր ուշադրությունը կենտրոնացնի ոչ թե օրենքի վրա որպես այդպիսին, այլ մասնավոր հանգամանքներում դիմումատուի նկատմամբ այն կիրառելու ձեւի վրա (տե՛ս վերելում հիշատակված՝ *Քենեդիի* գործը, § 119. եւ վերելում հիշատակված՝ *Գորանովա-Կարաենեւայի* գործը, § 48):

64. Ղատարանը նկատում է, որ դիմումատուի բողոքները հիմնականում վերաբերում են ոչ թե ներպետական իրավունքում միջամտության համար անհրաժեշտ իրավական հիմքերի բացակայությանը, այլ իր նկատմամբ գաղտնի դիտման միջոցառումներ իրականացնելու թույլտվություն տալիս Վարչական շրջանի դատարանի կողմից օրենքի համապատասխան պահանջներին չհետեւելուն:

65. Դիմումատուն նշել է, որ դատարանի 2010 թվականի փետրվարի 3-ի որոշումը չի համապատասխանել Քրեական դատավարության օրենսգրքի 286-րդ հոդվածի պահանջներին: Կառավարությունը չի անդրադարձել այս փաստարկին: Մասնավորապես, որոշման եզրափակիչ մասում նշված չէ դիմումատուի՝ որպես այն անձի անունը, որի նկատմամբ թույլատրվել է ոստիկանության կողմից տեսագրում եւ ձայնագրում կատարելը (տե՛ս վերելում՝ 9-րդ պարբերությունը): Կառավարությունը նշել է, որ որոշման պատճառաբանական մասից պարզ է եղել, որ գաղտնի դիտում թույլատրվել է կատարել դիմումատուի նկատմամբ: Ղատարանը նկատում է, այդուհանդերձ, որ դատարանի 2010 թվականի փետրվարի 3-ի որոշման պատճառաբանական մասը Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վարչության կողմից ներկայացված համապատասխան միջնորդության բառացի վերարտադրումն է, որում վերջինս նշել էր, որ Ա.Ս.-ի գործողությունները պարունակել են 311-րդ հոդվածով սահմանված հանցագործության, այն է՝ կաշառք ստանալու տարրեր (տե՛ս վերելում՝ 8-րդ եւ 9-րդ պարբերությունները): Կառավարության մոտեցմանը հետեւելով՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ համապատասխան միջնորդության եւ դրա հիման վրա ընդունված դատարանի որոշման մեջ դիմումատուի փոխարեն սխալմամբ նշվել է Ա.Ս.-ի անունը, եւ որ գաղտնի դիտման միջոցառումներ թույլատրվել է իրականացնել դիմումատուի նկատմամբ եւ ոչ թե մեկ ուրիշի: Ամեն դեպքում Ղատարանն այն կարծիքին է, որ գաղտնի դիտումը լուրջ միջամտություն է անձի մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին, դրա համար հիմք ծառայող դատարանի թույլտվությունը չի կարող

այնպիսի անորոշ ձեւակերպում ունենալ, որ մտորումների եւ ենթադրությունների տեղիք տա դրա բովանդակության մասով եւ, որ ամենակարեւորն է, այն անձի մասով, որի նկատմամբ տվյալ միջոցառումը կիրառվում է:

66. Ավելին, Զրեական օրենսգրքի 286-րդ հոդվածով պահանջվում է, որ դատարանի որոշման մեջ, *inter alia*, նշվի ձեռնարկվելիք քննչական գործողությունը կամ օպերատիվ-հետախուզական միջոցառումը՝ հստակեցնելով գործողության կամ միջոցառման տեսակը (տե՛ս վերելում՝ 27-րդ պարբերությունը): Դատարանը նկատում է, որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասում առկա է օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակների սպառնիչ ցանկ, եւ այդ ցանկում դատարանի 2010 թվականի փետրվարի 3-ի որոշմամբ նախատեսված՝ «ձայնագրում եւ տեսագրում» կոչվող միջոցառման տեսակ նշված չէ: Սույն գործով ոստիկանությունը ձայնագրել է դիմումատուի՝ Ա.Ս.-ի հետ խոսակցությունները փետրվարի 3-ի եւ 4-ի նրանց հանդիպումների ընթացքում, ինչպես նաեւ նախորդ օրը նրանց հեռախոսային խոսակցությունը (տե՛ս վերելում՝ 10-րդ եւ 11-րդ պարբերությունները): Հետեւաբար պարզ է դառնում, որ ոստիկանությունն իրականացրել է երկու տարբեր տեսակի օպերատիվ-հետախուզական միջոցառում, այն է՝ արտաքին դիտում եւ հեռախոսային խոսակցությունների վերահսկում (տե՛ս վերելում՝ 32-րդ եւ 33-րդ պարբերությունները), մինչդեռ դատարանի 2010 թվականի փետրվարի 3-ի որոշմամբ այդ միջոցառումները չեն հստակեցվել:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Դատարանը գտնում է, որ ընդհանուր առմամբ դիմումատուի նկատմամբ կիրառված գաղտնի դիտումը չի իրականացվել պատշաճ դատական վերահսկողությամբ:

67. Նշված դիտարկումները բավարար են, որպեսզի Դատարանը եզրակացնի, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով դիմումատուին գաղտնի դիտել են ոչ «օրենքով նախատեսված» կարգով: Հաշվի առնելով այս եզրակացությունը՝ Դատարանն անհրաժեշտ չի համարում սույն գործով վերանայել համապատասխանությունը Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետի մյուս պահանջներին (տե՛ս *Պետրովան ընդդեմ Լատվիայի* [Petrova v. Latvia], թիվ 4605/05, § 98, 2014 թվականի հունիսի 24):

68. Հետեւաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

69. Դիմումատուն բողոքել է, որ գաղտնի դիտման ճանապարհով ձեռք բերված ապացույցներն օգտագործվել են իր դեմ հարուցված քրեական վարույթում: Նա որպես հիմնավորում նշել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը, որով, այնքանով, որքանով վերաբերելի է, սահմանվում է հետեւյալը.

«Ցուրաքանչյուր ոք, երբ որոշվում են... իրեն ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը, ունի ... տրիբունալի կողմից արդարացի ... լսումների իրավունք»:

Ա. Ընդունելիությունը

70. Դատարանը նշում է, որ այս բողոքը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետև նշում է, որ այն անընդունելի չէ որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ Էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

71. Դիմումատուն պնդել է, որ դատաքննությունն արդար չի եղել, քանի որ դատարանները որպես ապացույց ընդունել են իրեն անօրինական կերպով գաղտնի դիտելու արդյունքում անօրինական ճանապարհով ձեռք բերված տեսաձայնագրությունները եւ իրենց որոշումները հիմնավորել են այդ ապացույցներով: Սա հակասել է Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով ապացույցների թույլատրելիության վերաբերյալ համապատասխան կանոններին, ինչի արդյունքում դատավարությունն անարդարացի է եղել:

72. Կառավարությունը պնդել է, որ վարույթի ընթացքում դիմումատուն գործնականում հնարավորություն է ունեցել առարկելու տեսաձայնագրությունները որպես ապացույց օգտագործելուն: Տվյալ տեսաձայնագրությունները չեն եղել միակ ապացույցը, որի վրա նրա մեղադրական դատավճիռը հիմնված է եղել, իսկ վիճարկվող ապացույցի՝ ներպետական դատարանների կողմից գնահատումը չի եղել կամայական:

2. Դատարանի գնահատականը

ա) Ընդհանուր սկզբունքները

73. Դատարանը կրկին նշում է, որ թեեւ 6-րդ հոդվածով երաշխավորվում է արդար դատաքննության իրավունքը, դրանով որպես այդպիսին չեն սահմանվում ապացույցների թույլատրելիության կանոններ, ինչը ներպետական իրավունքով կարգավորման ենթակա հարց է (տե՛ս *Շենկն ընդդեմ Շվեյցարիայի* [Schenk v. Switzerland], 1998 թվականի հուլիսի 12, § 45, շարք Ա, թիվ 140. *Տեյշեյրա դե Կաստրոն ընդդեմ Պորտուգալիայի* [Teixeira de Castro v. Portugal], 1998 թվականի հունիսի 9, § 34, Վճիռների եւ որոշումների մասին գեկույցներ 1998-IV. *Յալլոհն ընդդեմ Գերմանիայի* [ՄՊ] [Jalloh v. Germany [GC]], թիվ 54810/00, §§ 94-96, ՄԻԵԴ 2006-IX. եւ *Մորեյրա Ֆեռեյրան ընդդեմ Պորտուգալիայի (թիվ 2)* [ՄՊ] [Moreira Ferreira v. Portugal (no. 2) [GC]], թիվ 19867/12, § 83, 2017 թվականի հուլիսի 11):

74. Հետեւաբար սկզբունքորեն Դատարանի խնդիրը չէ որոշել ապացույցների որոշակի տեսակների, օրինակ՝ ներպետական օրենսդրության շրջանակներում անօրինական ճանապարհով ձեռք բերված ապացույցների թույլատրելիությունը, կամ որոշել՝ արդյոք դիմումատուն իրականում մեղավոր է, թե ոչ: Պատասխան ակնկալող հարցն այն է, թե արդյոք վարույթը, ընդհանուր առմամբ, ներառյալ՝ այն եղանակը, որով ձեռք են բերվել ապացույցները, արդար են եղել: Սա ներառում է տվյալ «անօրինականության», եւ եթե խոսքը Կոնվենցիայով նախատեսված մեկ այլ իրավունքի խախտման մասին է, ապա հայտնաբերված խախտման բնույթի ուսումնասիրում (տե՛ս *Բիկովն ընդդեմ Ռուսաստանի* [ՄՊ] [Bykov v. Russia [GC]], թիվ 4378/02, § 89, 2009 թվականի մարտի 10. *Լի ԴեԼիսն*

ընդդեմ Բելգիայի [Lee Davies v. Belgium], թիվ 18704/05, § 41, 2009 թվականի հունիսի 28. եւ *Փրեյդն ընդդեմ Գերմանիայի* [Prade v. Germany], թիվ 7215/10, § 33, 2016 թվականի մարտի 3):

75. Այն հարցը պարզելիս, թե արդյոք վարույթն ընդհանուր առմամբ եղել է արդար, հարկավոր է հաշվի առնել նաեւ, թե արդյոք պահպանվել են պաշտպանության կողմի իրավունքները: Պետք է հստակեցվի, մասնավորապես, արդյոք դիմումատունն հնարավորություն ունեցել է վիճարկելու ապացույցների իսկությունը եւ առարկելու դրանց օգտագործման դեմ (տե՛ս *Չիլագյին ընդդեմ Ռումինիայի* (որոշում) [Szilagyi v. Romania (dec.)], թիվ 30164/04, 2013 թվականի դեկտեմբերի 17): Ավելին, պետք է հաշվի առնվի ապացույցի որակը, այդ թվում՝ արդյոք այն ձեռք բերելու հանգամանքները վստահելիության եւ իսկության հետ կապված կասկածների տեղիք չեն տալիս (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, վերելում հիշատակված՝ *Բիկովի* գործը, § 90 եւ *Լիսիցան ընդդեմ Խորվաթիայի* [Lisica v. Croatia], թիվ 20100/06, § 49, 2010 թվականի փետրվարի 25): Չնայած այն հանգամանքին, որ դատաքննության արդար լինելու հետ կապված խնդիր է առաջանում այն դեպքում, երբ ձեռք բերված ապացույցի իսկությունը չի հիմնավորվում այլ նյութերով, հարկ է նշել, որ եթե ապացույցը ծանրակշիռ է, եւ դրա վստահելիության հետ կապված կասկածներ չկան, ապա հիմնավորող ապացույցի առկայությունը, համապատասխանաբար, այդքան էլ անհրաժեշտ չէ (տե՛ս վերելում հիշատակված՝ *Լի Դեկսի* գործը, § 42. վերելում հիշատակված՝ *Բիկովի* գործը, § 90. եւ *Բաշիչն ընդդեմ Խորվաթիայի* [Bašić v. Croatia], թիվ 22251/13, § 48, 2016 թվականի հոկտեմբերի 25):

76. Ավելին, երբ որոշվում է, թե արդյոք վարույթն ընդհանուր առմամբ արդար է եղել, տվյալ մասնավոր հանցագործությունը քննելու եւ պատժելու գործում կարող է հաշվի առնվել հանրային շահը եւ ապացույցների ձեռքբերման օրինականության մասով դրա կարեւորությունը անհատի շահի կարեւորության համեմատ (տե՛ս վերելում հիշատակված՝ *Յալլոհի* գործը, § 97, եւ վերելում հիշատակված՝ *Փրեյդի* գործը, § 35):

77. Ինչ վերաբերում է, մասնավորապես, Կոնվենցիայի մասով հայտնաբերված խախտման բնույթի ուսումնասիրությանը, ապա Դատարանը նկատում է, որ մի շարք գործերով գաղտնալսման սարքերի օգտագործումն այն համարել է 8-րդ հոդվածի խախտում, քանի որ այդ միջամտությունը «օրենքով նախատեսված» կարգով չի կատարվել: Բայցեւայնպես, այդ եղանակով

ձեռքբերված տեղեկատվությունը որպես ապացույց ընդունելը տվյալ գործի հանգամանքներում չի հակասում 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդարության պահանջներին (տե՛ս վերելում հիշատակված՝ *Խանի* գործը, §§ 25-28. վերելում հիշատակված՝ *Բիկովի* գործը, §§ 94-105, եւ վերելում հիշատակված՝ *Պ. Գ.-ի եւ Ջ. Հ.-ի* գործը, §§ 37-38):

բ) Այդ սկզբունքների կիրառումը սույն գործի նկատմամբ

78. Դատարանը նկատում է, որ դիմումատուն գործնականում ապացույցների իսկությունը վիճարկելու եւ դրանց օգտագործման դեմ առարկելու հնարավորություն է ունեցել: Նա այդպես էլ վարվել է Վարչական շրջանի դատարանում վարույթի ժամանակ եւ իր բողոքներում (տե՛ս վերելում՝ 17-րդ եւ 20-րդ պարբերությունները): Պետք է ընդունել, որ Վարչական շրջանի դատարանը դիմումատուի փաստարկներին շատ թեթեւակիորեն է անդրադարձել՝ նշելով միայն, որ դատավարական խախտումների վերաբերյալ դիմումատուի պնդումները չեն հաստատվել (տե՛ս վերելում՝ 19-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, իր որոշման մեջ Վերաքննիչ դատարանն ըստ էության քննել է դիմումատուի փաստարկները եւ հիմնավորել վիճարկելի ապացույցների մասով Վարչական շրջանի դատարանի եզրակացություններն անփոփոխ թողնելու իր որոշումը (տե՛ս վերելում՝ 21-րդ պարբերությունը): Այսպիսով, փաստը, որ վիճարկելի տեսաձայնագրություններն ապացույցների շարքից հանելու դիմումատուի փորձերն անհաջող են եղել, էական նշանակություն չունի այն եզրակացության համար, որ դիմումատուն ունեցել է հնարավորություն վիճարկելու դրանց իսկությունը եւ առարկելու դրանց օգտագործման դեմ, ինչը նա արել է (տե՛ս վերելում հիշատակված՝ *Դրագոժեւիչի* գործը, § 132):

79. Դատարանն այնուհետեւ նկատում է, որ վիճարկելի ապացույցները չեն եղել միակ ապացույցը, որի վրա դիմումատուի մեղադրական դատավճիռը հիմնված է եղել (համեմատե՛ք վերելում հիշատակված՝ *Շենկի* գործը, § 48. եւ վերելում հիշատակված՝ *Խանի* գործը, § 37): Վարչական շրջանի դատարանը դիմումատուի նկատմամբ մեղադրական դատավճիռ կայացնելիս հիմնվել է Ա.Ս.-ի ցուցմունքի, վկաների ցուցմունքների, իրեղեն ապացույցների, դատափորձագիտական ապացույցների, ինչպես նաեւ օպերատիվ տվյալների վրա (տե՛ս վերելում՝ 19-րդ պարբերությունը):

80. Այս հանգամանքներում Դատարանը գտնում է, որ դիմումատուի դատաքննության ժամանակ գաղտնի տեսաձայնագրված նյութերի օգտագործումը չի հակասում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ն կետով երաշխավորված արդարության պահանջներին:

81. Հետևաբար Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

82. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:»:

Ա. Վնասը

83. Դիմումատուն պահանջել է 30 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

84. Կառավարությունը դիմումատուի պահանջը համարել է չափազանցված:

85. Հաշվի առնելով սույն գործի բոլոր հանգամանքները՝ Դատարանն ընդունում է, որ դիմումատուն կրել է ոչ նյութական վնաս, որը չի կարող փոխհատուցվել միայն խախտման փաստը արձանագրելով: Դատարանը, կատարելով իր գնահատումն արդարացիության սկզբունքով եւ հաշվի առնելով գործի առանձնահատուկ հանգամանքները, դիմումատուին շնորհում է 1 200 եվրո որպես ոչ նյութական վնասի հատուցում:

Բ. Ծախսերը եւ ծախքերը

86. Դիմումատուն ծախսերի եւ ծախքերի փոխհատուցման պահանջ չի ներկայացրել:

Գ. Հկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

87. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱԿՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. *Հայտարարում է* գանգատն ընդունելի.
2. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում.
3. *Վճռում է*, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել:

4. *Վճռում է, որ՝*

ա) պատասխանող պետությունը վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վերջնական դառնալու օրվանից երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուին վճարի 1 200 եվրո (հազար երկու հարյուր եվրո)՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում, որը պետք է փոխարկվի Հայաստանի Հանրապետության դրամով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչև վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

5. *Մերժում է* դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2019 թվականի դեկտեմբերի 5-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Աբել Կամպոս

Զսենյա Տուրկովիչ

Քարտուղար

Նախագահ